1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1916

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ




ԱԶԳԱՅԻՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

## ՔՆԱՐԱԿԱՆ

# ԿԵԱՆՔԻ ԾՈՎԱՓԻՆ

(ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏ)

ՈՒՇԻՄՕՐԷՆ դիտած էք, ո՜հ, ճերմակազարդ գեղանին՝
Ծովածաւալ փրփրոցուռոյց ջուրի ծաղիկը փըրփուր․
Համապարփակ անճառահրաշ տիեզերքի խորանին
Անկիւնակալ շուշանիկ մ'է՝ նըւիրական, ճո՛խ, մաքուր…
Ուշիմօրէն դիտած էք ո՜հ, ճերմակազարդ գեղանի՜ն։

❧ ❧

Մանրադիտակ նըշմարեցէք ծովափին վրայ թիւթաւոր
Այլափոխուած դարապատում շիջելափառ յուշիկներ
Կեանքեր — աւա՜ղ — ըզգայազուրկ անգիտակից վիրաւոր
Ու հոգեվար՝ որ շընչահեղձ մահուան չոր գիրկն են ինկեր…
Մանրադիտակ նըշմարեցէք ծովափին վրայ թիւթաւո՛ր։

❧ ❧

Լա՜ւ զըննեցէք՝ աստղի Թըւով աւազակոյտ խաւն անծայր․
— Ո՛վ անապատ միօրինակ, – ի՞նչպէս խորհո՜ւրդ մ'է վըսեմ․
Մըշտածածուկ հոն անթեղուած պերճ գաղտնիքներ կան հազար
Ու ես *մըտքո՛վս* հետաքըրքիր կորովաբիբ կը դիտեմ…
Լա՜ւ զըննեցէք աստղի Թըւով աւազակոյտ խաւն անծա՜յր։

ՄԵՆԱՍԷՐ



digitised by A.R.A.R.@